Արձանագրություն N 4
Առողջապահության նախարարության կարիքների համար պատվաստանյութերի ձեռքբերման «ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2019/25» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան «26» «Սեպտեմբեր» 2019թ.
ժամը 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Ս.Գրիգորյան
Հանձնաժողովի անդամներ Մ.Մխիթարյան, Վ.Մանուկյան

Հանձնաժողովի քարտուղար Հ.Մնացականյան

1. Ներկայացված տեխնիկական բնութագրի շտկման առաջարկի մասին

(Ս.Գրիգորյան)

Ընդունել ի գիտություն, որ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 47-րդ կետը՝ առաջարկվել էր Սանոֆի Պաստեռ ընկերության շտկել արձանագրված անհամապատասխանությունը՝ ներկայացնելով հրավերով սահմանված տեխնիկական բնութագրով պահանջվող տեղեկատվությունը:

Սանոֆի Պաստեռ ընկերությունը ներկայացրել է պահանջվող փաստաթուղթը՝ Առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից տրված տեղեկանքը:

Որոշվեց. Սանոֆի Պաստեռ ընկերության կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Հայաստանի Հանրապետության ՊԵԿ հարցում ներկայացնելու մասին

(Ս.Գրիգորյան)

Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով հարցում է ներկայացվել ՀՀ ՊԵԿ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Ընթացակարգի ամփոփման մասին

(Ս.Գրիգորյան)

Հիմք ընդունելով մասնակցի կողմից ներկայացված հայտը և որակավորումը հիմնավորող փաստաթղթերը.

✓ Որոշվեց «ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2019/25» ծածկագրով գնման ընթացակարգը ամփոփել և հաղթող ճանաչել՝ Սանոֆի Պաստեռ ընկերությանը՝ 546,000 Եվրոյին համարժեք 287,234,220 ՀՀ դրամ պայմանագրային գումարով:

✓ Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասը, **որոշվեց.** «ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2019/25» ծածկագրով գնման ընթացակարգի համար անգործության ժամկետ չսահմանել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ս.Գրիգորյան

Անդամներ՝ ---------- Մ.Մխիթարյան

---------- Վ.Մանուկյան

Քարտուղար՝ ---------- Հ. Մնացականյան